Հաշվետվություն

2026 թվականի ապրիլի 26-29-ը Հնդկաստանի Հանրապետություն (Նյու Դելի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Արամ Գուգարաց, Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Հնդկաստանի Հանրապետություն (Նյու Դելի), 2026 թվականի ապրիլի 26-29-ը

3. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի գլոբալ աշխարհագրական տեղեկատվության կառավարման փորձագետների Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային կոմիտե (UN-GGIM-AP)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   ՄԱԿ-ի գլոբալ աշխարհագրական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (UN-GGIM-AP) գործադիր խորհրդի նիստին մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման շրջանակներում քննարկվել են ոլորտային զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող հետևյալ թեմաները.

- երկրատարածական տեղեկատվության կառավարման ոլորտում տարածաշրջանային առաջնահերթությունների և քաղաքականությունների ներկայացում,
- աշխատանքային խմբերի գործունեության արդյունքների ամփոփում և հետագա ռազմավարական ուղղությունների սահմանում,
- ՄԱԿ-ի գլոբալ աշխարհագրական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (UN-GGIM-AP) լիագումար նիստերի կազմակերպման և անցկացման գործընթացների պլանավորում,
- ՄԱԿ-ի գլոբալ աշխարհագրական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի (UN-GGIM) 16-րդ նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների շրջանակում առաջնահերթությունների սահմանում,

- գեոդեզիական ցանցերի ինստիտուցիոնալացում՝ հետագա ճշգրիտ և փոխգործունակ երկրատարածական տվյալների ապահովման նպատակով,
- հողային կառավարման համակարգերում թափանցիկության և կայունության բարձրացման գործիքակազմերի մշակում,
- ազգային մակարդակում ինտեգրված երկրատարածական էկոհամակարգերի ձևավորում՝ որպես կայուն զարգացման հիմք,
- երկրատարածական համակարգերի նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ վերլուծական կարողությունների ընդլայնում:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

ՄԱԿ-ի գլոբալ աշխարհագրական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (UN-GGIM-AP) գործադիր խորհրդի նիստը և փորձագիտական տեխնիկական նստաշրջանը հանդիսացել են կարևորագույն միջազգային մասնագիտական հարթակ, որը միավորել է գործադիր խորհրդի անդամներին, քարտուղարության ներկայացուցիչներին, աշխատանքային խմբերի ղեկավարներին, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային գործընկեր կառույցների ներկայացուցիչներին:

Միջոցառման ընթացքում քննարկումները նպատակաուղղված էին երկրատարածական տեղեկատվության կառավարման ոլորտում տարածաշրջանային համագործակցության զարգացմանը և տվյալների փոխգործունակության ապահովմանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել գեոդեզիական ցանցերի թվայնացման և նորարարական լուծումների ներդրմանը՝ կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով:

Քննարկումների շրջանակում մասնակիցները կարևորել են՝

- երկրատարածական և վիճակագրական տվյալների ինտեգրման անհրաժեշտությունը՝ կառավարման քաղաքականությունների մշակման նպատակով,
- հողային կառավարման համակարգերում թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման ուղղությամբ նորարարական մոտեցումների կիրառումը,
- ազգային երկրատարածական տվյալների ենթակառուցվածքների ձևավորման և զարգացման առաջնահերթությունը,
- ակադեմիական համայնքի և մասնավոր հատվածի հետ համագործակցության ընդլայնումը՝ գիտելիքի փոխանակման և նորարարությունների խթանման նպատակով,

- երկրատարածական ինտելեկտի (Geospatial Intelligence) կիրառման ընդլայնումը՝ ռազմավարական և օպերատիվ որոշումների կայացման գործընթացներում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

ՄԱԿ-ի գլոբալ աշխարհագրական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (UN-GGIM-AP) գործադիր խորհրդի նիստի ընթացքում համանախագահների կողմից հաստատվել է, որ կազմակերպության 15-րդ լիագումար նիստը կանցկացվի Չինաստանի Սանյա քաղաքում՝ 2026 թվականի սեպտեմբերի վերջին:

Միաժամանակ, օրակարգին համապատասխան քննարկվել են ՄԱԿ-ի գլոբալ աշխարհագրական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի (UN-GGIM) 16-րդ նստաշրջանի նախապատրաստական աշխատանքները, որը նախատեսվում է անցկացնել Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Յորք քաղաքում՝ 2026 թվականի օգոստոսի սկզբին:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հնդկաստանի Հանրապետությունն կատարած այցը հնարավորություն է ընձեռել ծանոթանալու ոլորտում առկա հիմնախնդիրներին, դրանց լուծման ուղղություններին, ինչպես նաև ներկայացնելու սեփական փորձի և մասնագիտական գիտելիքների վրա հիմնված մոտեցումները՝ ներգրավվելով միջազգային մասնագիտական համայնքի միասնական տեսլականի ձևավորման գործընթացում:

Որպես ՄԱԿ-ի գլոբալ աշխարհագրական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (UN-GGIM-AP) գործադիր խորհրդի անդամ՝ իմ մասնակցությունը վերոնշյալ խորհրդի նիստին և փորձագիտական տեխնիկական նստաշրջանին առանձնահատուկ կարևորություն ունի՝ պայմանավորված տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում ոլորտային առաջնահերթությունների ձևավորման և միջազգային համագործակցությունների ձևավորման տեսանկյունից:

9.Ստորագրությունը, ամսաթիվը:

Արամ Գուգարաց 05.05.2026 թ.